«16»03 2023 թ. N 1124/0/5

ԵՐԱՇԽԻՔ N 23-0082

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ ԿԱ Ոստիկանության (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 21,000,000.00 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի թիվ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20/12/2024թ. օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն, ոչ ուշ, քան 06/05/2025թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591

«16» 03 2023 թ. N 1125/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 23-0084
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ ԿԱ Ոստիկանության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 պայմանագրով նախատեսված (այսուհետ պայմանագիր) պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 63,000,000.00 (վաթսուներեք միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի թիվ 900008000698 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2023թ. օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն, ոչ ուշ, քան 30.04.2024թ. ներառյալ:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/2023/Հ-30-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
   3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո: